

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՈՒՄ ԼՐԱ-
ՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-1047-08.04.2025-ՏՀ-011/0)
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) առաջարկվում է փոփոխել Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական անձանց եկամուտների համընդհանուր հայտարարագրման համակարգի շրջանակներում եկամտային հարկի տարեկան հաշվարկների (հայտարարագրերի) ներկայացման և եկամտային հարկի վճարման վերջնաժամկետները:

Վերոգրյալի կապակցությամբ, հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը նախագծի վերաբերյալ սկզբունքային դիտարկումներ չունի: Մինևույն ժամանակ, ստորև ներկայացնում ենք որոշ առաջարկություններ:

1. «Նույնականացման քարտերի մասին» օրենքի 4-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ նույնականացման քարտը տրամադրվում (փոխանակվում) է դիմում ներկայացնելու օրվան հաջորդող 15-րդ աշխատանքային օրը, այսինքն՝ քաղաքացուն նույնականացման քարտ տրամադրվում է 21-րդ օրը:

Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգավորումը կարող է լինել ինքնանպատակ այն դեպքերում, երբ քաղաքացին դիտավորությամբ սահմանված ժամկետից ավելի ուշ ներկայանա նույնականացման քարտ ստանալու համար կամ ընդհանրապես չցանկանա ստանալ նույնականացման քարտը:

Այս առումով, առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետում «նույնականացման քարտը ստանալու ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ» բառերը փոխարինել «նույնականացման քարտի տպագրման օրվան հաջորդող ամսվա 25-ը ներառյալ» բառերով:

2. Նախագծի 3-րդ հոդվածից առաջարկում ենք հանել «(2024 և 2025 թվականների հաշվետու տարիների համար համապատասխանաբար՝ 2025 թվականի հունվարի 1-ին մինչև 2025 թվականի նոյեմբերի 1-ը և 2026 թվականի մարտի

2-ից մինչև 2026 թվականի նոյեմբերի 1-ը)» ձևակերպումը և նախատեսել որպես սույն օրենքի անցումային դրույթ՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի պահանջները: